

Հետաքրքիր Ե իմանալ

Հայտնի է, որ երբ մարմնի խտությունը հավասար է հեղուկի խտությանը, այն կախված վիճակում գտնվում է հեղուկի ներսում, քանի որ արքիմեդյան ուժը հավասարակշռում է ծանրության ուժին:

Կարելի² է պնդել, որ այդ դեպքում մարմինը գտնվում է անկշռության վիճակում:

Անշուշտ ո՛չ: Անկշռության վիճակում մարմնի ներսում ներքին լարումները բացակայում են, նրա առանձին մասերը չեն ազդում միմյանց վրա: Հեղուկում գտնվող մարմնի տարբեր մասերի վրա ազդող ծանրության ուժերի շնորհիվ ներքին լարման ուժերը չեն անհետանում, ավելին, մարմինը ճնշում է հեղուկին, որն այդ դեպքում նրա համար հենարան է հանդիսանում: